Քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության առանձնահատկությունները

«Քաղաքական երկխոսություն» ՀԿ
Սոնա Մխիթարյան

Անոտացիա

Հետազոտությունը բացահայտում է քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության ֆասիլիտացման լավագույն միջազգային փորձը, ինչպես նաև միջկուսակցական և կուսակցություններ-քաղհասարակություն երկխոսության առանձնահատկությունները Հայաստանում: Ուսումնասիրվել են վերոնշյալ երկխոսության խոչընդոտներն ու նախադրյալները, թեմատիկ ու ֆորմատային առանձնահատկությունները: Հետազոտությունը իրականացվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ և Եվրասիա համագործակցության հիմնադրամի՝ «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար. «ԴԱՏԱ» ծրագրի շրջանակներում տրամադրված հետազոտական ենթադրամաշնորհի շնորհիվ: Տվյալ հետազոտությունը կարող է կիրառվել միջկուսակցական և կուսակցություններ-քաղհասարակություն երկխոսություն ֆասիլիտացնող և կուսակցությունների հետ քաղաքականությունների մշակման գործընթացներում և այդ գործընթացներից դուրս համագործակցող և երկխոսող ՔՀԿ-ների կողմից: Հետազոտությունում արտահայտված տեսակետները հեղինակինն են և պարտադիր չէ, որ համընկնեն «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության և Եվրասիա համագործակցության հիմնադրամի տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա 2
Ներածություն 4
Մեթոդաբանություն 6
Կուսակցությունների հետ և միջև երկխոսությունը միջազգային ասպարեզում 7
Միջկուսակցական երկխոսությունը Հայաստանում 14
Քաղաքական կուսակցությունների հետ երկխոսությունը Հայաստանում 19
Եզրակացություն 26
Հավելվածներ 28
Գրականություն 31
Աբստրակտ 33
Abstract 33

Ներածություն

Քաղաքական կուսակցությունները որոշիչ նշանակություն ունեն ժողովրդավարական համակարգերի զարգացման և ամրապնդման գործընթացներում: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունը անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի, որի արդյունքում զգալիորեն ընդլայնվում է քաղաքական կուսակցությունների դերը երկրի կառավարման և քաղաքականությունների մշակման համակարգում: Հայաստանում կուսակցական համակարգի կայացումն ու զարգացումը դառնում է խորհրդարանական կառավարման համակարգի պատշաճ գործառման հրամայական: Այնուհետև 2021 թվականին Ազգային ժողովն ընդունեց Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագիծը և ներդրվեց պարզ համամասնական ընտրական համակարգը, որն ուղղված էր կուսակցությունների և կուսակցական համակարգի կայացմանը և քաղաքական ու գաղափարախոսական օրակարգերի առաջնայնության ապահովմանը: Նույն թվականին առաջին անգամ համամասնական ընտրական համակարգով տեղի են ունենում ՏԻՄ ընտրությունները, որոնք ընդլայնում են կուսակցությունների ազդեցությունը համայնքային մակարդակի քաղաքականությունների մշակման ու որոշումների կայացման գործընթացներում: Վերոնշյալ ժամանակաշրջանում «Կուսակցությունների մասին» օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները նույնպես կարևոր ազդեցություն են թողում Հայաստանում կուսակցական համակարգի զարգացման վրա: Այնուամենայնիվ, կուսակցությունների քաղաքական պատասխանատվության ընդլայնմանն ու նրանց դերակատարության բարձրացմանը զուգահեռ, վերջիններիս հետ և միջև չի հաստատվել արդյունավետ քաղաքական համագործակցություն և երկխոսություն: Ներկա անցումային ժողովրդավարության և հետպատերազմյան շրջանում մեծապես կարևորվում է այսպիսի համագործակցության դերը, քանի որ երկխոսությունն ապահովում է ոչ միայն քաղաքակությունների մշակման գործընթացի թափանցիկությունն ու ներառականությունը, այլև խթանում է բովանդակալից հանրային դիսկուրսի և քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորմանը:

Չնայած Հայաստանում քաղաքացիական հասարակությունն ունի քաղաքական կուսակցությունների հետ երկխոսության երկարամյա փորձ՝ այնուամենայնիվ, այդ երկխոսությունը դեռևս լիովին կայացած չէ: Ի տարբերություն քաղհասարակության կազմակերպությունների ՔՀԿ-պետական մարմիններ երկխոսության և համագործակցության, որն ավելի ինստիտուցիոնալ է և ինտենսիվ, կուսակցությունների հետ երկխոսությունը չի գրավել հայաստանյան հետազոտական ու ՔՀԿ համայնքի ուշադրությունը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ներկայում առկա են նախաձեռնություններ և հարթակներ, որոնք միտված են ոչ միայն զարգացնելու կուսակցություններ-ՔՀԿ-ներ համագործակցությունը, այլև միջկուսակցական երկխոսությունը:

Քաղաքական երկխոսությունը՝ որպես հաղորդակցության մեխանիզմ, եղել է մի շարք հետազոտությունների առարկա, սակայն մինչ օրս այս եզրույթի սահմանման շուրջ գիտական և հետազոտական համայնքը միակարծիք չէ: Տվյալ երկխոսությունն ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքաղաքական գործընթացների կարևորագույն տարրերից է: Հիմնականում միջազգային հարաբերությունների ոլորտում այն սահմանվում է իբրև «*պետությունների և այլ միջազգային դերակատարների միջև փոխգործակցության հիմնական ձև, որի նպատակը միմյանց դիրքորոշումների փոխանակումն է, հիմնական հաղորդագրությունների փոխանցումը և հարաբերությունների հաստատումը*» (Council of the European Union, 2014, p. 26): Հետազոտական և ՔՀԿ համայնքում տվյալ հայեցակարգի ուսումնասիրությունն ու սահմանումը կատարվել է

տարբեր դիտանկյուններից: Օրինակ՝ ժողովրդավարական զարգացման համատեքստում քաղաքական երկխոսությունն ինքնին դիտարկվում է որպես ժողովրդավարական համագործակցության մի մեխանիզմ, քանի որ հիմնված է դիսկուրսիվ հավասարության սկզբունքների վրա՝ միտված երկխոսության մասնակիցների կողմից փոխշահավետ արդյունքների ձեռքբերմանը: Տվյալ համատեքստում Ի. Պիևիլինը քաղաքական երկխոսությունը դիտարկում է որպես «*մի ուղի, որը խնդիրների համատեղ քննարկումների և դիրքորոշումների մերձեցման փուլերի միջոցով վեճերից, տարաձայնություններից և հակամարտություններից տանում է դեպի հաղորդակցության մասնակիցների ըմբռնում և համագործակցություն*» (Pielievin, 2019, p. 119): Երկխոսության հայեցակարգն ինքնին ավելի բարդ է, որի ընդհանրական ցանկացած սահմանում կարող է լինել թերի: Հետազոտական համայնքը, որպես երկխոսության պարտադիր տարրեր, շեշտադրում է տարբեր երևույթներ, ինչպես օրինակ՝ հակամարտությունների նվազեցումը՝ որպես երկխոսության հիմնական նպատակ (Hawes, 1999, pp. 229-235), կամ օբյեկտիվության սկզբունքը՝ որպես երկխոսության անքակտելի մաս (Graham, 1998):

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և երկխոսության հայեցակարգի սահմանման շուրջ ներկայիս բանավեճերի առկայությունը՝ տվյալ փաստաթղթում երկխոսությունը դիտարկվում է որպես «առնվազն երկու կողմերի միջև հաղորդակցության մեխանիզմ»: Տվյալ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ընտրական գործընթացներից դուրս քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսությունը:

Հետազոտության հիմնական **նպատակն է** բացահայտել քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության ֆասիլիտացման միջազգային լավագույն փորձը և ուսումնասիրել վերոնշյալ երկխոսության դրսևորումները ՀՀ-ում: Նշված նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1) ուսումնասիրել միջկուսակցական երկխոսության ֆասիլիտացման ձևավորված լավագույն միջազգային փորձը,
2) բացահայտել հայաստանյան կուսակցությունների միջկուսակցական երկխոսության դրսևորումները,
3) բացահայտել Հայաստանում ՔՀԿ-քաղաքական կուսակցություններ երկխոսության ու համագործակցության առանձնահատկությունները և դուրս բերել ֆորմատային և թեմատիկ բնորոշիչները,
4) քննել վերոնշյալ երկխոսության խոչընդոտները, նախադրյալները, արդյունքները:

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակներին հասնելու և վերոնշյալ երկխոսության շուրջ բազմազան և խորը տեղեկատվություն ստանալու համար կիրառվել է փաստաթղթերի որակական վերլուծության մեթոդը, մասնավորապես ուսումնասիրվել են մի շարք միջազգային առաջատար կազմակերպությունների և ուղեղային կենտրոնների զեկույցներն ու հետազոտությունները: Հետազոտության շրջանակներում կիրառվել է խորքային հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկման մեթոդը:

Խորքային հարցազրույցներ են անցկացվել հայաստանյան յոթ կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Ընտրվել են այն կուսակցությունները, որոնք 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից ի վեր հանդիսացել են խորհրդարանական մեծամասնություն և/կամ համաեվրոպական կուսակցությունների անդամ են: Ֆոկուս խմբերում ներառվել են հարցազրույցների ընթացքում հիշատակված և ՔՀԿ համայնքում ձնագնի մեթոդով դուրս բերված ՀՀ-ում ներկայումս ամենարդյունավետ երկխոսող քաղհասարակության կազմակերպությունները: Հետազոտության շրջանակներում իրականացվել է յոթ խորքային հարցազրույց և երկու ֆոկուս-խմբային քննարկում: Ուսումնասիրությունն իրականացվել է 2022 թվականի մարտ-մայիս ժամանակահատվածում:

Խնդիրների բացահայտման համար իրականացվել է ՀՀ-ում ՀԿ ոլորտի վերաբերյալ 2015 թվականից ի վեր կատարված հետազոտությունների և վերլուծական զեկույցների ուսումնասիրություն: Վերլուծության մեջ ներառվել են քաղաքացիական հասարակության կարողություններին, ՔՀԿ դաշտի կայունության, ՔՀԿ-ների քաղաքականությունների մշակման գործընթացին անդրադարձող, ինչպես նաև ՔՀԿ-ների և պետական կառույցների, ՔՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների երկխոսության ու համագործակցության շուրջ վերլուծություններն ու զեկույցները:

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով դուրս են բերվել միջազգային և եվրոպական քաղաքական երկխոսություն ֆասիլիտացնող ու աջակցող, ինչպես նաև վերջինիս ուսումնասիրությամբ զբաղվող կազմակերպությունների հետազոտություններն ու զեկույցները: Մասնավորապես, ուշադրություն է դարձվել ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի, NIMD-ի, Berghof Foundation-ի, Open European Dialogue-ի, Institute of Democracy and Electoral Assistance-ի, European Partnership for Democracy-ի, Chatham House-ի, National Democratic Institute-ի, Westminster Foundation for Democracy-ի և այլ կազմակերպությունների ուղեցույցներին, զեկույցներին ու ուսումնասիրություններին: Փաստաթղթի վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են վերոնշյալ վաթսունից ավել զեկույցներ:

Կուսակցությունների հետ և միջև երկխոսությունը միջազգային ասպարեզում

Միջկուսակցական երկխոսության բացակայությունը խոչընդոտում է ոչ միայն բազմակուսակցական ժողովրդավարական համակարգերի կայացմանը, այլև քաղաքականությունների արդյունավետ մշակմանը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, միջկուսակցական երկխոսությունը մեծ մասամբ տեղի է ունենում պետական և որոշում կայացնող ինստիտուտների ներքո, ինչպիսին օրինակ՝ խորհրդարաններն են, սակայն միջկուսակցական երկխոսության ֆասիլիտացիան իրագործվել է ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքաղաքական և փորձագիտական դերակատարների կողմից: Օրինակ՝ 2019 թվականին Եվրախորհրդարանի պատգամավորները մեկնարկում են Սերբիայում միջկուսակցական երկխոսություն, որը արդեն իսկ ունեցել է մի քանի փուլ և որի մասնակիցներն են ինչպես խորհրդարանական, այնպես էլ արտախորհրդարանական կուսակցությունները: Երկխոսության մեկնարկը պայմանավորված էր երկրում քաղաքական դաշտի բևեռվածությամբ և մի շարք բարեփոխումների իրականացման անհրաժեշտությամբ:

Արտաքին դերակատարների կողմից տարբեր քաղաքական ուժերի միջև երկխոսության խթանման օրինակներ կարող ենք գտնել նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում: 2020 թվականին Վրաստանում հետընտրական լարվածության արդյունքում ավելի է սրվում իշխանական և ընդդիմադիր կուսակցությունների փոխհարաբերությունները և վտանգի տակ դնում ինչպես բարեփոխումների օրակարգը, այնպես էլ խորացնում քաղաքական ճգնաժամը: Ճգնաժամի հանգուցալուծման նպատակով ԵՄ-ն ստանձնում է վրացական քաղաքական կուսակցությունների միջև երկխոսության և միջնորդության դերակատարումը:

Վերը նշված և մի շարք այլ օրինակներ փաստում են, որ արտաքին քաղաքական դերակատարները՝ որպես երկխոսության նախաձեռնողներ, հանդես են գալիս հիմնականում կոնֆլիկտային իրավիճակներում և որպես երկխոսության նպատակ հետապնդում են կոնֆլիկտի մասնակի կամ ամբողջական վերացումն ու ճգնաժամի հետագա խորացման կանխումը (Blunck et al., 2017, pp. 161-164): Միջկուսակցական երկխոսության նմանատիպ ֆասիլիտացումն ավարտվում է գործնական պայմանավորվածություններով, ինչպես օրինակ՝ Վրաստանի ընդդիմադիր ու իշխանական կուսակցությունների միջև ստորագրված հուշագիրը և սերբական կուսակցությունների կողմից երկրում ընտրական բարեփոխումների գործիքակազմի համաձայնեցումը[1]: Հարկ է նշել, որ առկա են բազմաթիվ օրինակներ, երբ միջազգային դերակատարները ֆասիլիտացրել են ոչ միայն միջկուսակցական, այլև քաղաքական կուսակցություններ-քաղհասարակություն երկխոսությունը, օրինակ՝ ԵԱՀԿ տարածաշրջանային կենտրոնի կողմից Ղազախստանում կուսակցությունների և քաղհասարակության միջև

[1] Տանյա Ֆայոն, 2021: *Եվրախորհրդարանը կոչ է անում Սերբիային լիարժեք միջոցներ ձեռնարկել ընտրությունների անցկացումը բարելավելու համար* https://www.europarl.europa.eu/delegations/en/the-european-parliament-urges-serbia-to-/product-details/20211028DPU31563

երկխոսության ֆասիլիտացումը, որի նպատակն էր երկխոսության կողմերի միջև համագործակցության խթանումը[2]:

Միջազգային կոնտեքստում միջկուսակցական և կուսակցությունների հետ երկխոսություն խթանող մյուս դերակատարները, ինչպիսիք են քաղհասարակության կազմակերպությունները, փորձագիտական կենտրոնները և այլն, ևս հանդիսացել են միջկուսակցական երկխոսության նախաձեռնող և ֆասիլիտացնող կողմ (The European Commission, 2019, p. 13):

Այդպիսի ամենաարդյունավետ և ամենակայացած հարթակներից մեկն է Նիդերլանդների **Բազմակուսակցական Ժողովրդավարության Ինստիտուտը** (NIMD), որը հետապնդում է միջկուսակցական երկխոսության կայացման և ամրապնդման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ նպատակներ: Կազմակերպության կողմից երկխոսության ֆասիլիտացումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝ անաչառություն, ներառականություն, հավասարություն, սեփականության իրավունք (ownership), գործընկերություն, ճկունություն և կոնտեքստի առանձնահատկություն ու երկարաժամկետ պարտավորություն (Jong and Breukelen, 2012, p. 7): Այն հիմնադրվել է յոթ հոլանդական քաղաքական կուսակցությունների կողմից, որոնք տարբեր գաղափարախոսությունների և քաղաքական հայացքների կրողներ են և որի նպատակը նոր ժողովրդավարությունների աջակցությունն է բազմակուսակցական մոտեցման միջոցով: Կազմակերպությունը նախաձեռնել է քաղաքական երկխոսության խթանման և զարգացման ծրագրեր մոտավորապես քսան երկրում: Կազմակերպության քաղաքական երկխոսության խթանման մեխանիզմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկխոսության համար առանձնակի շեշտադրվում է շահառուների միջև վստահելի հարաբերությունների և փոխվստահության միջավայրի ձևավորումը:

Մյուս առանձնահատկությունը, որով առաջնորդվում է կազմակերպությունն իր գործունեության երկրներում, քաղաքական իրավիճակի և պետական ինստիտուտների գործունեության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների կայացման զարգացումն է: Քանի որ հետկոնֆլիկտային հասարակություններում և նոր ու փխրուն ժողովրդավարություններում քաղաքական կուսակցությունների գործունեությունը և միջկուսակցական ժողովրդավարությունը բախվում են մի շարք խնդիրների, կազմակերպությունը որդեգրում է բազմամակարդակ մոտեցում: Տվյալ մոտեցումը խթանում է փոփոխություններ մի քանի մակարդակներում. համակարգային մակարդակում՝ ապահովելով կուսակցությունների գործունեության համար համապատասխան միջավայր, դերակատարների մակարդակում՝ զարգացնելով կուսակցությունների քաղաքական գործընթացներում արդյունավետ մասնակցելու կարողությունները և մշակութային մակարդակում՝ կուսակցությունների ժողովրդավարական արժեքների խթանումը (*Working with political parties in fragile and conflict-affected settings.*, 2015): Կիրառված մոտեցումները հետապնդում են երկարաժամկետ նպատակներ, ինչպիսիք են քաղաքական տրանսֆորմացիան, քաղաքական կուսակցությունների զարգացումն ու շահառուների միջև վստահելի հարաբերությունների կառուցումը:

Կազմակերպությունն իրագործում է իր առաքելությունը նաև Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում՝ Ուկրաինայում և Վրաստանում հաստատված գրասենյակների շնորհիվ: Ի

---

[2] ԵԱՀԿ, 2009: *Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության գրասենյակը աջակցում է Ղազախստանում քաղհասարակության և քաղաքական կուսակցությունների միջև երկխոսությանը:* Աստանա

https://www.osce.org/astana/51669

տարբերություն այլ տարածաշրջանների՝ տվյալ երկրներում միջկուսակցական երկխոսությունն իրագործվում է ոչ միայն այդ երկրների ազգային մակարդակում, այլև տարածաշրջանային մակարդակում[3]: Ըստ կազմակերպության՝ «NIMD-ն օգնում է Վրաստանին ստեղծել քաղաքական միջավայր, որտեղ բազմազանությունն ու բազմակարծությունը արդարացիորեն դիտվում են որպես երկրի հզորացման բաղադրիչներ և ոչ թե ներկայացնում են բևեռացման և առճակատման կործանարար բացը» (Integration of national minorities in Georgia: Policy papers, 2017, p. 7):

Ընդհանուր առմամբ, կազմակերպության կողմից ֆասիլիտացված միջկուսակցական և/կամ կուսակցություններ-ՔՀԿ երկխոսության թեմատիկան կարելի է բաժանել երկու խմբի՝ քաղաքական համակարգի ժողովրդավարեցմանն ու փոփոխությանը, կուսակցությունների զարգացմանը վերաբերող թեմաներ և օրակարգային՝ երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված թեմաներ: Առաջինի դեպքում կազմակերպությունը շեշտադրել է կուսակցությունների կարողությունների զարգացումը և այդ համատեքստում երկխոսության միջոցառումները նվիրված են եղել կանանց քաղաքական հզորացմանը, երիտասարդների կարողությունների զարգացմանը, ազգային փոքրամասնությունների՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածությանը, տարբեր դերակատարների փոխհարաբերություններում բռնության և կոնֆլիկտի բացառմանը և այլն: Երկրորդ խմբի դեպքում նկատում ենք, որ երկխոսությունն ուղղված է եղել տարբեր բնագավառներում խնդիրների ձևակերպմանն ու քննարկմանը: Շատ հաճախ վերոնշյալ երկխոսությունը տեղի է ունեցել առաջարկությունների, օրինագծերի և այլ քննարկումների շուրջ:

Հարկ ենք համարում նշել, որ երկխոսության խթանման գործընթացում «NIMD»-ն իր գործընկեր երկրներում, ելնելով երկխոսության թեմայի առանձնահատկություններից, նաև փորձում է ներգրավել այլ ազգային և միջազգային դերակատարների՝ քննարկման թեմայի շուրջ համատեղ օրակարգ և պատասխանատվության ձևավորման նպատակով: Երկրորդ հերթին, միջազգային դերակատարների ներգրավումը թույլ է տալիս ֆորմալիզացնել վերջիններիս և քաղաքական կուսակցությունների փոխհարաբերությունները: Ինչ վերաբերում է կազմակերպության կողմից կիրառված ֆորմատային նախընտրություններին, հարկ է նշել, որ NIMD-ը նախաձեռնել է ինչպես բաց, այնպես էլ փակ հանդիպումներ և քննարկումներ: Այնուամենայնիվ, կարող ենք եզրակացնել, որ կազմակերպության կողմից երկխոսության ձևաչափի ընտրությունը հիմնվել է քաղաքական կուսակցություններին իրենց առօրյա քաղաքական մրցակցության միջավայրից դուրս բերելուն:

Հետկոնֆլիկտյան երկրներում նախընտրություն է տրվում ոչ լուսաբանվող ֆորմատներին: Ֆորմատային մյուս կարևոր բաղադրիչը ներառականությունն է. երկխոսության միջոցառումներին ներկա են խորհրդարանական, արտախորհրդարանական, ընդդիմադիր և իշխանական կուսակցություններ, իսկ քաղհասարակության կազմակերպությունից բացի, որոշ դեպքերում միջոցառումներին ներկա են գտնվել ազգային փոքրամասնությունների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կազմակերպության կողմից կրոնական կազմակերպությունների ղեկավարների ներգրավումը որպես երկխոսության կողմեր հատկապես կիրառվել է հետկոնֆլիկտային աֆրիկյան երկրներում (օրինակ՝ Մալիում), որտեղ վերջիններս հանդես էին գալիս որպես ի հայտ եկած նոր քաղաքական դերակատարներ (Working with political parties in fragile and conflict-affected settings., 2015, p. 13):

---

[3] *Բազմակուսակցական ժողովրդավարության համար Արևելյան Եվրոպայի կենտրոնը Ուկրաինայում մեկնարկում է Ժողովրդավարության չորրորդ դպրոցը*

https://eecmd.org/eecmd-to-launch-the-4th-democracy-school-in-dnipro-ukraine/

NIMD-ը հիմնականում նախաձեռնում է երկխոսության միջոցառումների շարք, ինչը թույլ է տալիս աստիճանաբար վստահության մթնոլորտ ձևավորել և հնարավորություն ընձեռել կուսակցություններին ծանոթանալ միմյանց տեսակետերին ու բովանդակալից երկխոսություն ծավալել: Յուրաքանչյուր երկխոսության միջոցառում ունենում է հստակ նպատակ և ակնկալվող արդյունքներ: Ըստ կազմակերպության՝ երկխոսությունից ակնկալվող արդյունքները չպետք է լինեն չափից դուրս հավակնոտ, բայց և յուրաքանչյուր ֆասիլիտացված երկխոսությունը կամ երկխոսությունների շարքը պետք է հասնի իր առաջ դրված նպատակներին (Prieto and Bloching, 2015, p. 121): Օրինակ՝ կազմակերպության միջոցառումների որոշ շարք ավարտվել է կուսակցությունների կողմից համաձայնեցված հայտարարություններով, կոնկրետ խնդիրներին վերաբերող ճանապարհային քարտեզներով, երկխոսության ընթացքում ընդունված միասնական դիրքորոշումներով:

NIMD-ը նշում է, որ քաղաքական կուսակցությունների կարողությունների զարգացումը և միջկուսակցական երկխոսության խթանումը չեն կարող դիտարկվել որպես բացառապես տեխնիկական գործընթացներ, հատկապես, երբ քաղաքական էլիտաները սկզբնական շրջանում հաճախակիորեն հետաքրքրված չեն համագործակցությամբ և երկխոսությամբ (Ten Hoove and Scolthbach, 2008, p. 16): Եթե միջկուսակցական երկխոսությունը տեղի է ունենում քաղաքականությունների մշակման գործընթացների համատեքստում, հաշվի են առնվում տվյալ ֆորմատային առանձնահատկությունները՝ շահագրգիռ կողմերին ներգրավելու և երկխոսության ֆասիլիտացման ներուժը, քաղաքականությունների մշակման գործընթացի և երկխոսության ֆասիլիտացման տեխնիկական ասպեկտների իմացությունը, ինչպես նաև երկխոսության արդյունքները թիրախային լայն շերտերին հաղորդելու ունակությունը (Prieto and Bloching, 2015, pp. 81-85): Առանցքային է երկխոսության ֆասիլիտատորի մասնագիտական պատրաստվածությունը և անաչառությունը:

Open European Dialogue (OED) հարթակը կարող է առանձնացվել իբր կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության հաջողված օրինակներից մեկը: Հարթակի նպատակներից է համաեվրոպական մակարդակում լրացնել ազգային խորհրդարանների՝ ավելի լայն եվրոպական քաղաքական բանավեճում ներգրավումը և բովանդակալից հաղորդակցության և կարծիքների փոխանակման ապահովումը: Ինչպես փաստում է հարթակը, «*Open European Dialogue-ը քաղաքականապես չեզոք հարթակ է, որի նպատակն է բարելավել եվրոպական քաղաքականությունը՝ աջակցելով քաղաքականություն մշակողներին ավելի լավ հասկանալ մարտահրավերներն ու հեռանկարները ողջ Եվրոպայից: Մենք դա անում ենք՝ միավորելով տարբեր կուսակցությունների և երկրների եվրոպացի քաղաքական գործիչներին, տարածք տրամադրելով երկխոսության համար և խթանելով նորարարական քաղաքական խոսակցությունները…*»[4]: Հարթակը հիմնականում գործում է քաղաքականությունների մշակման գործընթացների համատեքստում և անդրադառնում ԵՄ առաջնային սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնահարցերին: Այսպիսով, այն իր մասնակիցների շրջանակում ներառում է ինչպես եվրոպական տարբեր խմբակցությունների և քաղաքական ուժերի, այնպես էլ տարբեր ոլորտների և ԵՄ անդամ երկրների փորձագետների ու քաղաքականություն մշակողների: Տվյալ հարթակի երկխոսության ֆորմատը բնութագրվում է որպես մարդակենտրոն՝ փորձելով համապատասխան նորարարական մեխանիզմների կիրառմամբ ապահովել մի շարք քաղաքական հիմնահարցերի ախտորոշումն ու համապարփակ

[4] Բաց եվրոպական երկխոսություն: *Մեր պատմությունը*

https://www.openeuropeandialogue.org/about/

ընկալումը: Հարթակի քաղաքական երկխոսության ֆասիլիտացումն ուղղված է տարբեր տեսակետներ ունեցող մասնակիցների միջև բովանդակալից հաղորդակցության հաստատմանը: Երկխոսության ֆասիլիտացմանը տրվում է առանձնակի ուշադրություն, վերջինս ուղղված է միմյանց ակտիվ լսելու մշակույթի ձևավորմանը, որը ենթադրում է մասնակիցների միջև փոխըմբռնման ձևավորում, այլ ոչ թե կոնկրետ դիրքորոշման պարտադրանք կամ համոզում: Ինչպես հարթակը նշում է, իր ծրագրերի նպատակն է *«մնալ քաղաքականապես չեզոք և չպարտադրել կոնսենսուսի ձևավորում»* (Kolster et al., 2021, p. 5):

Ի տարբերություն NIMD-ի՝ Open European Dialogue-ը կուսակցությունների և փորձագետների ու ՔՀԿ-ների միջև երկխոսության ֆասիլիտացումը մեծ մասամբ իրագործում է քաղաքականությունների մշակման կոնտեքստում: Այդ նպատակով երկխոսությունը դիտարկվում է քաղաքականությունների մշակման առարկա՝ խնդիրների ախտորոշման ու բազմազան տեսանկյուններից քննության ենթարկման համատեքստում: Տվյալ դեպքում կազմակերպության երկխոսության ֆասիլիտացման մեթոդոլոգիան առաջին հերթին ձգտում է ոչ թե ստանալ բոլոր քննարկվելիք թեմաների լուծումներն ու պատասխանները, այլ ձևակերպել համապատասխան հարցեր (Open European Dialogue, 2021, p. 7): Երկխոսության հարթակի առանձնահատկություններից է, որ վերջինիս նախընտրելի երկխոսության ֆասիլիտացման մեթոդը բացառում է որևէ քաղաքական տեսակետի մեկուսացումը:

Վերոնշյալ նպատակները և առաջնահերթությունները հաշվի առնելով՝ Open European Dialogue-ը նախապատվություն է տալիս ոչ թե պանելային քննարկումներին և բանավեճերին, այլ ոչ ֆորմալ երկխոսության միջոցառումներին: Երկխոսության միջոցառման բնութագրիչներն են՝ «Chatham House» կանոնի կիրառումը և այլ նախապես համաձայնեցված երկխոսության կանոնները, որոնք ընդունվում են մասնակիցների կողմից, ինչպես նաև նախապես մշակված տեղեկատվական նյութերը, որոնք տրամադրվում են մասնակիցներին՝ քննարկման թեման, երկխոսության շրջանակն ու մանրամասները հստակեցնելու համար: Հարթակն իր կողմից օգտագործվող երկխոսության ֆորմատն անվանում է զրույցի սեղաններ, որի շուրջ հավաքվում են բազմապիսի կարծիքներ ունեցող մասնակիցները, որոնց տրվում է հավասար մասնակցության իրավունք: Երկխոսության ֆասիլիտատորը դրսևորում է անաչառ վերաբերմունք, ինչպես նաև ուղղորդում է մասնակիցների զրույցը ոչ թե քննարկման առարկայի շուրջ լուծումներ ստանալու, այլ հնչեցված դիտարկումները բալանսավորելու նպատակով:

Հարկ է նշել, որ անցյալ տարի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից Open European Dialogue-ը արժանացել է մրցանակի՝ որպես նորարարական ցանց/հարթակ, որը խթանում է միջսահմանային երկխոսությունը[5]: Հարթակի մյուս առանձնահատկություններից է նաև այն, որ չնայած վերոնշյալ թեմատիկ, ֆորմատային և երկխոսության ֆասիլիտացման նախընտրություններին՝ OED-ին չի դադարում երկխոսության հարթակի բարելավմանն ուղված հետազոտությունների և գործողությունների իրագործումը՝ համարելով, որ երկխոսության իրագործումն ու ֆասիլիտացիան պետք է պարբերաբար վերանայվի՝ համապատասխան քաղաքական և քաղաքականությունների մշակման առկա իրավիճակին ու փոփոխվող մարտահրավերներին:

---

[5] Մարշալի գերմանական հիմնադրամ, 2021: *Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը ճանաչում է Մարշալի գերմանական հիմնադրամի բաց եվրոպական երկխոսությունը որպես լավագույն նորարարական փորձ*

https://www.gmfus.org/news/oecd-recognizes-gmfs-open-european-dialogue-innovative-best-practice

Մյուս հարթակը, որը կարող ենք դիտարկել իբրև կուսակցությունների միջև ու կուսակցությունների հետ երկխոսություն խթանող ու իրականացնող հաջող միջազգային փորձի օրինակ, «**Chatham House»**-ն է: Վերջինս բնորոշում է իրեն իբրև *«անկախ քաղաքականության ինստիտուտ և բանավեճի ու երկխոսության վստահելի ֆորում»*[6]: Չնայած քաղաքական կուսակցությունները ոչ միշտ են եղել կազմակերպության նախաձեռնած երկխոսության միջոցառումների կողմը/մասնակիցը, այնուամենայնիվ, իբրև երկխոսություն խթանող ու իրականացնող հաջող միջազգային փորձի օրինակ, «Chatham House»-ի կողմից իրականացված միջկուսակցական ու կուսակցություններ-ՔՀԿ-ներ միջոցառումներն արժանի են ուշադրության: Շեշտադրենք, որ թեմատիկ առումով կազմակերպության երկխոսության միջոցառումները ոչ միայն ուղղակիորեն արձագանքում են միջազգային հարաբերությունների տարբեր բնագավառների օրակարգային խնդիրներին, այլև նախաձեռնում են երկխոսության միջոցառումներ, որոնք փորձում են ձևավորել օրակարգ: Կազմակերպությունը երկխոսության ֆասիլիտացման արդյունավետ իրագործման համար իրականացնում է միջոցառման թեմաների և ֆորմատների հստակ դասակարգում: Օրինակ՝ կազմակերպության թեմատիկ բլոկում առանձնացված են պաշտպանության և անվտանգության, էկոնոմիկայի, բնապահպանական, ինստիտուտների գործունեության և այլ ոլորտները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ներառում է ենթաթեմաները: Նույնը վերաբերում է երկխոսության միջոցառումների ֆորմատներին, որոնք նույնպես դասակարգված են ըստ տարբեր խմբերի, ինչպես օրինակ՝ կլոր-սեղան քննարկումներ, սեմինարներ, պանելային քննարկումներ և այլն: Քննարկումների դասակարգումն իրականացնելիս «Chatham House»-ը շեշտադրում է հասանելիության գործոնը: Ունկնդրի կարգավիճակը կազմակերպության մի շարք երկխոսության և այլ միջոցառումներին տրվում է հատուկ անդամակցության ընթացակարգին համաձայն: Ներկայումս կազմակերպությունն ունի անդամներ ավելի քան ութսունութ երկրներից, որոնք ներկայացնում են տարբեր ոլորտներ՝ բիզնես, դիվանագիտություն, քաղաքականություն, քաղհասարակություն և այլն (Chatham House, 2021, p. 4):

Այնուամենայնիվ, նկատում ենք, որ «Chatham House»-ի հաջողության գրավականն է կազմակերպության հեղինակությունը, փորձագիտական ներուժն ու երկարամյա գործունեությունը, որն էլ թույլ է տալիս ապահովել ինչպես որոշում կայացնողների, այնպես էլ տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու հետաքրքրվածությունը հարթակի հանդեպ: Իհարկե, կազմակերպության երկխոսության ֆասիլիտացիայի հիմնական բաղադրիչը կազմակերպության նույնանուն «Chatham House» կանոնն է, որը նպաստում է քննարկման մասնակիցների միջև վստահելիության ու անկեղծության մթնոլորտ ձևավորելուն: Տվյալ ձևաչափը կազմակերպությունը հատկապես կիրառում է այն դեպքերում, երբ միջոցառումների թեման զգայուն է կամ հակասական: Ֆորմատային առանձնահատկություններից են նախապես համաձայնեցված մասնակցային ու վարքագծային կանոնները:

Հետաքրքրական է նշել, որ ի տարբերություն վերոնշյալ օրինակների, երբ երկխոսության հարթակները նախընտրում են համագործակցել տարբեր միջազգային դոնորների, ուղեղային կենտրոնների ու կառավարությունների հետ, «Chatham House»-ը նաև իրականացրել է երկխոսության միջոցառումներ և քննարկումներ մասնավոր ոլորտի աջակցությամբ: Այդպիսի օրինակ է COVID-19-ի շրջանում կազմակերպության կողմից իրականացվող «Chatham House

---

[6] Chatham House: *Մեր մասին*

https://www.chathamhouse.org/about-us

Virtual Policy Dialogues»-ի շրջանակներում քաղցկեղի խնամքին նվիրված քննարկումների շարքը, որին մասնակցում էին ինչպես քաղաքական գործիչներ, այնպես էլ փորձագետներ: Վերոնշյալ քննարկումների շարքը, որը բաղկացած էր օնլայն և օֆլայն քննարկումներից, ֆինանսավորված էր «Merck&Co» դեղագործական կազմակերպության կողմից[7]: Վերոնշյալ օրինակները քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության ֆասիլիտացման միակ հարթակները չեն, սակայն հարկ է նշել, որ տվյալ հարթակների գործունեությունը համարվում է լավագույներից մեկը և շարունակվում է ուսումնասիրվել ինչպես կուսակցությունների ու ՔՀԿ-ների, այնպես էլ հետազոտողների կողմից[8]:

---

[7] Chatham House, 2020: *Երկխոսություն 2: Ճանապարհ դեպի առաջ. հավասարակշռելով առողջապահական առաջնահերթությունները հետկովիդյան ժամանակաշրջանում քաղցկեղի բուժման հարցում առաջընթացն ապահովելու համար*
https://www.chathamhouse.org/events/all/research-event/dialogue-2-way-forward-balancing-health-priorities-post-covid-19-era

[8] Սվասանդ, Լ. 2014: *Աջակցություն միջազգային կուսակցություններին: Ի՞նչ գիտենք արդյունքների մասին,* Բերգենի համալսարան

https://eba.se/en/reports/international-party-assistance-what-do-we-know-about-the-effects/16567/

Միջկուսակցական երկխոսությունը Հայաստանում

ՀՀ-ում միջկուսակցական երկխոսությունը չենք կարող նոր երևույթ համարել: Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտի զարգացմանը զուգահեռ կուսակցությունները նախաձեռնել են երկխոսության հաստատման փորձեր ինչպես գաղափարախոսական և նպատակային համագործակցություն ծավալելու, այնպես էլ ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու նպատակով: Խորքային հարցազրույցների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը ու վերջինիս վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել, որ կուսակցությունները քաղաքական երկխոսության հայեցակարգը ընկալում են տարբեր կերպ: Չնայած որոշ կուսակցություններ՝ հիմնականում արտախորհրդարանականները, երկխոսությունն ինքնին ընկալում են որպես նպատակ և արդյունք, այնուամենայնիվ, մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական երկխոսություն ծավալելիս կուսակցությունները հետապնդում են կոնկրետ նպատակներ և որպես երկխոսության արդյունք՝ ընդունելի են համարում իրենց նպատակների մասնակի կամ ամբողջական իրագործումը:

Հարկ է նշել, որ չնայած հետազոտության շրջանակներում անդրադառնում ենք 2015 թվականի վերընտրական գործընթացներից դուրս ծավալված երկխոսության դրվագներին, այնուամենայնիվ, մինչ 2015 թվականը քաղաքական կուսակցությունները նախաձեռնել և իրականացրել են քաղաքական երկխոսության ինչպես հաջողված, այնպես էլ ձախողված փորձեր: Կարող ենք առանձնացնել միջկուսակցական երկխոսության երեք տեսակ՝ միջկուսակցական երկխոսություն խորհրդարանական կուսակցությունների միջև, միջկուսակցական երկխոսություն արտախորհրդարանական կուսակցությունների միջև և երկխոսություն խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների միջև: Երկխոսության վերոնշյալ ձևաչափերը կիրառվել են Հայաստանում, սակայն ոչ բոլորն են կրել շարունակական բնույթ: Ներկայումս, արտախորհրդարանական կուսակցությունների երկխոսություն նախաձեռնելու նպատակն է համագործակցության հաստատումը, փոխադարձ ճանաչողությունը, ինչպես նաև համատեղ գործողությունների մշակումը՝ կախված կուսակցությունների քաղաքական և գաղափարախոսական առաջնահերթություններից:

Վերջին շրջանում արտախորհրդարանական կուսակցությունների երկխոսության շրջանակում տեղի են ունենում արտախորհրդարանական կուսակցությունների ոչ հանրային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում է համատեղ նպատակների իրականացման հնարավոր քայլերը և տեղի է ունենում դիրքորոշումների արձանագրում և համեմատում: Որոշ արտախորհրդարանական կուսակցություններ հարցազրույցների ընթացքում նշել են, որ հետաքրքրված են նոր համագործակցությունների հաստատմամբ և հատկապես գաղափարակից կուսակցությունների միջև հարաբերությունների խորացմամբ: Ինչ վերաբերում է խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների երկխոսությանը, որպես երկխոսության հաջողված օրինակներ՝ շեշտադրվել են տասնյոթ կուսակցությունների միասնական հայտարարությունը[9], ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և արտախորհրդարական ուժերի խորհրդակցական հարթակը և այլն: Խորհրդարանական կուսակցությունների երկխոսությունը հիմնականում տեղի է ունենում ինչպես Ազգային ժողովում՝ օրինագծերի մշակման գործընթացների ընթացքում, այնպես էլ այդ շրջանակից դուրս: Այդպիսի երկխոսության օրինակ է «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների երկխոսության

[9] 2020: *17 կուսակցությունների միասնական հայտարարությունը*

https://a1plus.am/hy/article/384995

արդյունքում հրապարակված համատեղ հայտարարությունը, որում կոչ էր արվում Անվտանգության խորհրդի համատեղ նիստ հրավիրել և ընդդիմադիր կուսակցությունների հետ անհապաղ հանդիպում կազմակերպել:

Ներկայումս, խորհրդարանում ներկայացված ուժերը հրապարակային երկխոսություն չեն ծավալել, ավելին՝ մի շարք փորձագետների գնահատականով ներկայիս խորհրդարանը ծայրահեղ բևեռված է և անհանդուրժող, ինչը ոչ միայն չի նպաստում երկխոսության մթնոլորտի ձևավորմանը, այլ որից նաև տուժում է խորհրդարանի արդյունավետությունը[10]: Այսպիսով, ներկայումս միջկուսակցական երկխոսություն ու համագործակցություն հիմնականում տեղի է ունենում իշխանություն (կամ իշխանամետ դիրքորոշում ունեցող)-ընդդիմություն (կամ ընդդիմադիր դիրքորոշում ունեցող) հարացույցի ներքո:

Վերոնշյալ օրինակները, ինչպես նաև ՀՀ-ում միջկուսակցական երկխոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ երկխոսության իրականացումը հիմնականում տեղի է ունեցել կուսակցությունների ուղղակի երկխոսությամբ: Սակայն հարկ է նշել, որ մի շարք կազմակերպություններ նախաձեռնել են կուսակցությունների՝ կարողությունների զարգացման և երկխոսության ֆասիլիտացիայի հնարավորություններ: Այդպիսի միջոցառումներն իրականացվել են ինչպես փակ, այնպես էլ բաց ձևաչափով: Օրինակ՝ «Ժառանգություն» կուսակցության, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի եւ «Ռոբերտ Շուման» ինստիտուտի համատեղ կազմակերպած վեց ընդդիմադիր կուսակցությունների մասնակցությամբ «Հայաստանյան նոր իրողությունները ժողովրդավարության զարգացման գործընթացում» կոնֆերանս-սեմինարը:

Հայաստանում միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների կողմից երկխոսության ֆասիլիտացման առանձնահատկություններից է այն, որ երկխոսության ֆասիլիտացումը հիմնականում հետապնդել է կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներ, իսկ կուսակցությունների՝ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերն ու նախաձեռնությունները կրել են շարունակական բնույթ: Վերջինիս շուրջ Հայաստանում հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում *Ազգային ժողովրդավարության ինստիտուտի* (NDI) գրասենյակը: NDI-ը առանձնակի ուշադրություն է դարձնում ՀՀ-ում կուսակցությունների և հասարակության/ընտրողների հաղորդակցության որակի բարելավմանը, ժողովրդավարական մարտահրավերներին ընդառաջ կուսակցական ռազմավարության արդյունավետ մշակմանը, կանանց և երիտասարդների ներգրավմանը քաղաքական և կուսակցական կյանքում և այլն[11]: Կազմակերպությունը պարբերաբար իրականացնում է հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ բացահայտելու քաղաքացիների առաջնահերթությունները՝ անհրաժեշտ քաղաքականությունների մշակման գործընթացներին աջակցելու նպատակով:

Հայաստանում միջկուսակցական երկխոսության նախկին փորձի ուսումնասիրությունը և հետազոտության առարկա մի շարք կուսակցությունների ներկայացուցիչների հետ իրականացված խորքային հարցազրույցները ցույց են տալիս, որ կուսակցությունների միջև արդյունավետ

---

[10] Ազգային ժողովի մոնիտորինգ, 2022: *Ազգային ժողովի մոնիտորինգ 8-րդ գումարում 2-րդ նստաշրջան. 1-ին զեկույց.*

https://www.parliamentmonitoring.am/assets/files/report/1645136329.pdf

[11] Ազգային ժողովրդավարության ինստիտուտի հայտարարություն, 2020: *Կանայք և երիտասարդները լինենու են Հայաստանի ժողովրդավարական հաջողության բանալին*, Երևան

https://www.ndi.org/sites/default/files/ARM_Press%20Statement_Trip%20Conclusion_2020_Feb_29.pdf

երկխոսության հաստատման և իրագործման ամենամեծ խոչընդոտը համապատասխան **քաղաքական մշակույթի բացակայությունն է**: Տվյալ խոչընդոտը շեշտադրվել է ինչպես վերջերս ձևավորված, այնպես էլ ավելի երկար քաղաքական փորձ ունեցող կուսակցությունների կողմից: Մատնանշվում են դեպքեր, երբ միջկուսակցական երկխոսության փորձերը մանիպուլացվում են այլ կուսակցությունների կողմից կամ թյուր ընկալվում հայաստանյան հասարակությունում: Կարծրատիպային մտածողությունը, ինչպես նաև միջկուսակցական երկխոսությունը մի շարք ուժերի կողմից որպես թիրախավորման գործիք կիրառելը շարունակում են մնալ արդյունավետ երկխոսության արգելք:

Ինչպես ցույց են տալիս խորքային հարցազրույցները, որոշ կուսակցություններ ունեն մտավախություն, որ ներկայիս խորհրդարանական իշխանական և ընդդիմադիր կուսակցությունների հետ երկխոսության հաստատման փորձերը կարող են մանիպուլացվել՝ վարկաբեկելու երկխոսության մաս կազմող կուսակցություններին կամ լեգիտիմացնել այդ կուսակցությունների գործողությունները: Ներկայումս կուսակցությունների ճնշող մեծամասնությունը հետպատերազմական լարված մթնոլորտը, քաղաքական բևեռվածությունն ու հրապարակային դաշտում դրսևորվող անհանդուրժողականության հռետորաբանությունը համարվում են միջկուսակցական երկխոսության ամենամեծ խոչընդոտները: Վերոնշյալ հանգամանքները ոչ միայն բարդացրել են երկխոսության հնարավորությունները, այլև ստիպել են մի շարք կուսակցությունների վերանայել իրենց քաղաքական առաջնահերթություններն ու միջկուսակցական երկխոսության և համագործակցության ռազմավարությունները:

Ինչ վերաբերում է միջկուսակցական արդյունավետ երկխոսության իրականացման համար անհրաժեշտ **նախադրյալներին**, կուսակցությունների պատկերացումները միանման չեն: Որոշները խորին հարցազրույցների ընթացքում հայտնել են այն կարծիքը, որ Հայաստանի ներկայիս մարտահրավերները և արտաքին քաղաքական անորոշ իրավիճակը կարող են հավելյալ խթան հանդիսանալ միջկուսակցական երկխոսության համար, մինչդեռ կա նաև այլ կարծիք, ըստ որի՝ պայմանավորված վերոթվարկյալ հանգամանքներով և կուսակցությունների՝ պետության զարգացման և կայացման տեսլականների շուրջ անհամաձայնությամբ՝ ներկայումս արդյունավետ երկխոսություն հաստատել հնարավոր չէ: Որպես կարևոր նախադրյալներ՝ առանձնացվում են կուսակցության՝ երկխոսություն ծավալելու պատրաստակամությունը, երկխոսության արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման քաղաքական կամքը, վստահելիության մթնոլորտի առկայությունը, երկխոսության հստակ նպատակների և ակնկալվող արդյունքների ձևակերպումն ու հստակեցումը:

Ինչպես փաստում են քաղաքական կուսակցությունները, մեծ մասամբ Հայաստանում միջկուսակցական երկխոսության նախաձեռնող կողմ հանդիսանում են կուսակցությունները: Որոշ դեպքերում միջկուսակցական երկխոսություն նախաձեռնող կողմ են եղել միջազգային կազմակերպություններն ու հիմնադրամները, սակայն այդ նախաձեռնությունները հիմնականում ուղղված են եղել կուսակցությունների, կուսակցության անդամ կանանց և երիտասարդների կարողությունների բարելավմանը, ինչպես նաև կուսակցություններին և ընտրական գործընթացներին վերաբերող օրինագծերին ու քաղաքականությունների մշակման գործընթացներին: Մինչ օրս տվյալ թեմաների շրջանակներում միջազգային կազմակերպությունները շարունակում են նախաձեռնել միջկուսակցական երկխոսության և համագործակցության հնարավորություններ:

Տեղական ՔՀԿ-ները նկատելի հետաքրքրություն չեն ցուցաբերել միջկուսակցական երկխոսություն նախաձեռնելու կապակցությամբ, սակայն իրականացված խորքային հարցազրույցների և ֆոկուս խմբերի ընթացքում նշվել են օրինակներ, երբ որոշ ՔՀԿ-ներ նախաձեռնել են միջկուսակցական

քննարկումներ, որի հիմնական նպատակն է եղել դիրքորոշումների ներկայացումը ու կարծիքների փոխանակումը: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կուսակցությունները մեծ մասամբ նախընտրում են երկխոսել առանց միջնորդների: Որպես միջկուսակցական երկխոսություն ֆասիլիտացնող դերակատար նախապատվություն է տրվում միջազգային կազմակերպություններին: Կուսակցությունները հարցազրույցների ընթացքում դա հիմնավորում են մի քանի հանգամանքներով. առաջին հերթին՝ միջազգային կազմակերպություններն օժտված են երկխոսության ֆասիլիտացման լավագույն բովանդակային և տեխնիկական մեխանիզմներով, ծանոթ են միջազգային լավագույն փորձին, ինչպես նաև առանձնակի կարևորվում է վերջիններիս անաչառությունը: Կուսակցությունները ՔՀԿ-ներին որպես երկխոսության ֆասիլիտատոր դիտարկելիս նշում են, որ միշտ չէ, որ ՔՀԿ-ները պահպանում են անաչառության սկզբունքը, շատ դեպքերում ՔՀԿ-ների կողմից ֆասիլիտացվող միջկուսակցական երկխոսությունը դիտարկվում է որպես ՔՀԿ օրակարգերի առաջ մղման փորձ: Այնուամենայնիվ, հետազոտության առարկա կուսակցությունները հարցազրույցների ընթացքում կատարել են այն դիտարկումը, որ հայաստանյան ՔՀԿ-ների դերակատարությունը որպես միջկուսակցական երկխոսության ֆասիլիտատոր կարող է և պետք է բարելավվի:

Հարկ է նշել, որ կուսակցության խորհրդարանական փորձը դիտարկվում է որպես առավելություն երկխոսության մեջ մտնող մյուս կուսակցությունների կողմից: Որոշ հայաստանյան կուսակցություններ շեշտադրում են, որ խորհրդարանական կուսակցությունների կամ խորհրդարանական փորձ ունեցող կուսակցությունների հետ երկխոսությունը կայանում է ավելի պրագմատիկ հարթությունում: Արտախորհրդարանական կուսակցությունների համար ներկայումս ցանկալի է երկխոսություն հաստատել խորհրդարանական կուսակցությունների՝ հատկապես իշխանական կուսակցության հետ: Ընդհանուր առմամբ, հետազոտության առարկա կուսակցությունները նշում են, որ չնայած երկխոսության որոշ հաջողված օրինակների՝ հայաստանյան կուսակցությունների երկխոսության կարողությունները թույլ են:

Միջկուսակցական երկխոսություն ծավալելիս կուսակցությունները հետապնդում են տարբեր նպատակներ: Հարզացրույցների ընթացքում կուսակցությունները նշում են, որ որպես երկխոսության **արդյունք** ակնկալում են պայմանավորվածությունների ձեռք բերում, համատեղ քաղաքական պայքարի մշակում, օրինագծերի մշակման գործընթացում համագործակցության հաստատում, գաղափարախոսական համագործակցության զարգացում, ինչպես նաև համապետական ու համազգային նշանակության հարցերի շուրջ անկեղծ քննարկում և դիրքորոշումների փոխանակում: Հատկանշական է, որ միջկուսակցական երկխոսության և արդյունքների շուրջ կուսակցությունների պատկերացումներն ու ակնկալիքները ոչ միշտ են համընկնում: Եզակի դեպքերում հետազոտության առարկա կուսակցության ներկայացուցիչը երկխոսությունը դիտարկել է միմիայն որպես կոնֆլիկտային իրավիճակի հարթեցման և բռնության բացառման միջոց: Ֆորմատային նախապատվություններին անդրադառնալիս կուսակցությունները միակարծիք են, որ երկխոսության ֆորմատը կախված է նպատակից: Կարևորվել է վստահելիության մթնոլորտն ու քննարկման գործառնական ուղղվածությունը: Որոշ կուսակցական ներկայացուցիչներ նշում են, որ երկխոսության իրականացումը ոչ հրապարակային ձևաչափով երկխոսության նախնական շրջանում նպաստում է միջկուսակցական փոխըմբռնման հաստատմանը՝ հավելելով, որ, այնուամենայնիվ, կուսակցությունները պետք է հաշվետու լինեն հասարակությանը՝ հանրայնացնելով երկխոսության հաստատումն ու արդյունքները: Կուսակցության անհատների և առաջնորդների միջանձնային հարաբերությունները նույնպես դիտարկվել են որպես միջկուսակցական երկխոսության ազդեցիկ գործոն:

Ինչ վերաբերում է երկխոսության ինստիտուցիոնալ բնույթին, ապա հետազոտությունը բացահայտել է, որ ոչ բոլոր կուսակցություններն ունեն երկխոսության ընդունված ընթացակարգ: Որպես երկխոսության ընթացակարգի կարևոր տարրեր, նշվել են կուսակցությունների կողմից երկխոսության բանագնացների նշանակումը, երկխոսության նպատակի հստակեցումն ու շարունակական բնույթը: Հետազոտության առարկա հանդիսացող եզակի կուսակցություններ նշել են երկխոսության գրավոր ձևաչափի մասին, երբ դիրքորոշումների փոխանակումն ու պայմանավորվածությունների ձեռք բերումը տեղի է ունեցել կուսակցական գրագրության միջոցով:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցությունները երկխոսելիս առաջնություն են տալիս գաղափարական/արժեքային գործոնին և/կամ կոնկրետ քաղաքական իրավիճակներում համընկնող նպատակներին: Հետպատերազմական շրջանում միջկուսակցական երկխոսության առաջնային թեմաներ են դիտարկվել անվտանգությունը, հայ-թուրքական հարաբերությունները, ԼՂ հիմնահարցը, Հայաստանի ժողովրդավարական զարգացումը: Բացառությամբ որոշ ընդդիմադիր կուսակցությունների՝ հետազոտության առարկա կուսակցությունների համար ամենապահանջված իշխանական կուսակցության հետ երկխոսությունն է: Երկխոսության կողմի ընտրության կարևոր չափորոշիչները կուսակցությունների քաղաքական կապիտալն է, կայացվածությունն ու քաղաքական իրավիճակի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունները:

Քաղաքական կուսակցությունների հետ երկխոսությունը Հայաստանում

Տվյալ ենթագլխում անդրադարձ է կատարվում քաղաքական կուսակցություն-քաղաքացիական հասարակություն երկխոսությանը: Օգտագործվում է քաղաքացիական հասարակություն հայեցակարգի տվյալ սահմանումը՝ «հասարակական գործունեության այն բոլոր ձևերը, որոնք իրականացվում են պետության հետ չփոխկապակցված և պետական մարմինների կողմից չկառավարվող անհատների կամ խմբերի կողմից: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունը կազմակերպչական կառույց է, որի անդամները ժողովրդավարական գործընթացի միջոցով ծառայում են ընդհանուր շահերին և միջնորդի դեր են խաղում պետական իշխանությունների և քաղաքացիների միջև» (Թրանսփարենսի Ինթերնեշնլ, 2022, էջ 6): Հայաստանում քաղհասարակության և քաղաքական կուսակցությունների միջև երկխոսությունն ու համագործակցությունն ունեն երկարամյա պատմություն: Չնայած երկխոսության մի շարք հաջողված օրինակներին՝ վերոնշյալ երկխոսությունը ենթակա է ինստիտուցիոնալ բարեփոխումների: Որպես երկխոսության հաջողված օրինակներ՝ հետազոտության մասնակից կուսակցություններն առանձնացրել են «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ)-ՔՀԿ համագործակցությունը 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների ընթացքում, ԼՀԿ և «Իրավաբանների հայկական ասոցիացիայի» միջև կնքված հուշագիրը, 4+4+4 համագործակցության ձևաչափը, ՀՅԴ-աշխատանքային իրավունքներով զբաղվող ՔՀԿ-ների երկխոսությունը և այլն: Որոշ հայաստանյան կուսակցությունների կուսակցական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս հանրային օրակարգ ձևավորելիս ապավինում են իրենց կողմից հիմնադրած հասարակական կառույցների գործունեությանը: Ինչպես օրինակ՝ ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից համահիմնադրած «Լույս» հիմնադրամը, որը պատրաստում է հետազոտական զեկույցներ և իրականացնում հանրային-փորձագիտական քննարկումներ կուսակցության՝ հետաքրքրության առարկա թեմաների շուրջ: Նմանապես կուսակցությունները հանրային դաշտում գաղափարախոսական օրակարգեր առաջ տանելիս նախընտրում են ոչ միայն ՔՀԿ համայնքի հետ համագործակցության հաստատումը, այլև երիտասարդների ներգրավածությամբ կրթական նախաձեռնությունների իրականացումը, օրինակ՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության կողմից իրականացվող «Լիբերալ քաղաքականության դպրոցը», «Քաղաքացու որոշում» կուսակցության կողմից հիմնադրված «Համերաշխություն» գիտահետազոտական հիմնադրամը և Քաղաքական դպրոցը, որոնց առաքելությունը քաղաքական և քաղաքացիական ակտիվիզմի խթանումն է: Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններ-ՔՀԿ երկխոսության ձևաչափերին, քաղաքականությունների մշակման ոլորտում քաղաքական գործիչների հետ դեմ առ դեմ հանդիպումներն ու հանրային լսումները քաղհասարակության և որոշում կայացնողների միջև ամենահաճախ օգտագործվող գործիքակազմերից են, որոնց իրականացման հարցում կարևոր դերակատարում ունեն հենց ՔՀԿ-ները (Թրանսփարենսի Ինթերնեշնլ, 2022, էջ 5): Հետաքրքրական է նկատել, որ ինչպես կուսակցությունները, այնպես էլ ՔՀԿ համայնքը, իրականացված հարցազրույցների և ֆոկուս խմբերի ընթացքում առանձնակի կարևորել են Ընտրական օրենսգրքի փոփոխությունների շուրջ ծավալված ինստիտուցիոնալ երկխոսությունը, որն աչքի է ընկել երկխոսության դերակատարների մասնակցայնությամբ և քաղաքական պատրաստակամությամբ: Կուսակցությունները տվյալ երկխոսության շրջանակներում բարձր են գնահատել ՔՀԿ-ների փորձագիտական կարծիքն ու փորձը:

Այնուամենայնիվ, մի շարք հետազոտություններ փաստում են, որ ՔՀԿ համայնքը մեծապես նախապատվություն է տվել համագործակցելու պետական կառույցների հետ: Չնայած որ ՔՀԿ-

ների՝ պետական կառույցների հետ երկխոսության հարթակները, ինչպիսիք են նախարարություններին կից հանրային խորհուրդները և այլ մեխանիզմները, ավելի շատ են, քան կուսակցությունների հետ երկխոսության հարթակները, այնուամենայնիվ, որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ պետական կառույցների հետ երկխոսության նախաձեռնությունները ոչ միշտ են արդյունավետ, երբեմն դրանք արհեստական բնույթ են կրում և հետապնդում են կառավարության՝ միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխան լինելու նպատակը (Մարգարյան, 2018, էջ 56):

ՔՀԿ-ները հայաստանյան կուսակցությունների հետ երկխոսում և համագործակցում են հիմնականում կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակների իրականացման համար: Երկխոսության ձևաչափերն են՝ համատեղ աշխատանքային խմբերը, դեմ-առ-դեմ հանդիպումները, պանելային քննարկումները և այլն: Վերջին շրջանում Հայաստանում նախաձեռնվել են հարթակներ, որոնք միտված են կուսակցությունների և ՔՀԿ-ների միջև երկարաժամկետ և արդյունավետ համագործակցություն հաստատելուն: Օրինակ՝ «ՕքսիՋեն» հիմնադրամն իրականացնում է «Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն» համագործակցության հարթակը: Ինչպես նշվում է հարթակի ձևավորման հուշագրում. *«2019 թ. մարտի 8-ին Ազգային ժողովի «Ոսկեզօծ» դահլիճում, ստորագրվեց ԱԺ-ՔՀԿ փոխըմբռնման հուշագիր, որով կազմավորվեց երկկողմ համագործակցության բաց հարթակ՝ հասարակական կազմակերպությունների և ՀՀ 7-րդ գումարման Ազգային Ժողովի միջև՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման»*[12]: Չնայած հարթակի երկխոսության հիմնական կողմը պետական կառույցն է՝ Ազգային ժողովը, այնուամենայնիվ, տվյալ հարթակի շրջանակներում խորհրդարանական կուսակցությունները՝ որպես երկխոսության տարրեր, ցուցաբերում են յուրովի մոտեցումներ և նպաստում կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության իրականացմանը:

Մեկ այլ օրինակ է «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ ձևավորված «Երկխոսության հարթակը», որի նպատակն է կոտրել քաղաքական և քաղաքացիական ուժերի միջև առկա անջրպետը՝ խթանելով կառուցողական երկխոսություն: Ի տարբերություն «ՕքսիՋեն» հիմնադրամի վերոնշյալ հարթակի, որի գործունեությունը պայմանավորված է տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության հաստատման նպատակով, «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ի հարթակի ներքո կազմակերպված քննարկումները թեմատիկ սահմանափակում չունեն: Այսպիսով, կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության հաստատումը դիտարկվում է որպես հարթակի նպատակ, այլ ոչ թե միջոց: Հավելենք, որ բազմաթիվ են ՔՀԿ-ների կողմից նախաձեռնված միջոցառումները, որոնք նպատակ են հետապնդում քաղաքական կուսակցությունների հետ դիրքորոշումներ փոխանակել և օրակարգային հարցերի շուրջ քննարկում ապահովել:

Ընդհանրապես հայաստանյան դաշտում շատ քիչ են քաղհասարակության կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են կամ նպատակ են հետապնդում կուսակցությունների հետ երկարաժամկետ երկխոսություն հաստատել: Հիմնվելով ՔՀԿ համայնքի կողմից արդեն իսկ իրականացված հետազոտությունների, ինչպես նաև ֆոկուս- խմբային քննարկման ժամանակ հնչեցված կարծիքների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ ՔՀԿ-ները երկխոսություն ծավալելիս նախապատվություն են տալիս ուղղակիորեն և շարունակաբար

[12] ՕքսԵՋեն, 2019: *Ազգային ժողով-ՔՀԿ հարթակ*

https://bit.ly/3zsE34L

համագործակցելու պետական կառույցների և իշխանության հետ, իսկ քաղաքական կուսակցությունների հետ երկխոսությունը եղել է իրավիճակային: Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալ ՔՀԿ-ներ-իշխանություն, ՔՀԿ-ներ-պետական ինստիտուտներ երկխոսության բազմամյա պատմությանը՝ այն նույնպես չենք կարող համարել բացառապես արդյունավետ: Միևնույն ժամանակ, առկա է այն կարծիքը, որ «իշխանությունների վարած քաղաքականության վրա ազդելու հարցերում ՔՀԿ-ներն ավելի ազդեցիկ են, քան քաղաքական ընդդիմությունը»[13]: Ընդհանրապես, ՔՀԿ-պետական կառույցներ համագործակցությունը ՔՀԿ-ների կողմից դիտարկվում է պակաս լավատեսական՝ ի տարբերություն պետական ոլորտի ներկայացուցիչների: Առկա են երկկողմանի խնդիրներ, սակայն ՔՀԿ համայնքի կողմից հաճախ նշվում է, որ համագործակցությունը շատ հաճախ կրում է ձևական բնույթ, ինչն էականորեն խոչընդոտում է կառուցողական երկխոսության մթնոլորտի ձևավորմանը (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան, 2015, էջ 72-73):

Խորհրդարանական կառավարման համակարգի անցումից ի վեր կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսությունը շարունակվում է՝ գրանցելով ինչպես մի շարք հաջողություններ, այնպես էլ ձախողված փորձեր: Հետազոտությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ երկխոսությանն անդրադառնալիս կուսակցություններն ու ՔՀԿ-ները հնչեցնում են ինչպես համընկնող, այնպես էլ տարբերվող գնահատականներ: Երկխոսության շուրջ հարցազրույցների ու ֆոկուս խմբերի ընթացքում հնչեցված դիտարկումները նույնական չեն ՔՀԿ համայնքի և քաղաքական կուսակցությունների շրջանում:

Հետազոտության առարկա կուսակցությունների և ՔՀԿ-ների կողմից որպես կուսակցություն-ՔՀԿ համայնք երկխոսության խոչընդոտներ դիտարկվում են՝

Կուսակցությունների և քաղհասարակության ներկայացուցիչների միջև առկա անվստահությունը: Կուսակցությունների շրջանում կա կարծիք, որ հայաստանյան ՔՀԿ-ները չափից դուրս քաղաքականացված են: ՔՀԿ համայնքի ներգրավումը և հետաքրքրվածությունը ոչ ոլորտային մի շարք հարցերում կուսակցությունների կողմից դիտարկվել է որպես խնդրահարույց հանգամանք: Խորքային հարցազրույցները բացահայտում են, որ կուսակցությունների անվստահության պատճառներից է ՔՀԿ համայնքի ենթադրյալ կողմնակալությունն ու նախապաշարմունքային վերաբերմունքը: Կուսակցությունների շրջանակում առկա է այն տպավորությունը, որ ՔՀԿ համայնքը հայաստանյան կուսակցություններին ընկալում է միմիայն բացասական լույսի ներքո և կարծրատիպային մտածողության պատճառով խուսափում է կուսակցությունների հետ համագործակցելուց և վերջիններիս հետ ասոցացվելուց:

Միևնույն ժամանակ, խորհրդարանական և որոշ արտախորհրդարանական կուսակցությունների շրջանում շեշտադրվում է այն հանգամանքը, որ ՔՀԿ-ները ինչպես քաղաքականությունների մշակման գործընթացում, այնպես էլ այդ գործընթացից դուրս դրսևորում են իշխանամետ վարքագիծ: Ըստ հարցազրույցների մասնակիցների՝ տվյալ երևույթն ի հայտ է եկել 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո, ինչը մի շարք կուսակցությունների համար բարդացնում է վերջիններիս հետ երկխոսությունը: Խորհրդարանական որոշ ուժերի ներկայացուցիչների շրջանում դեռևս առկա է այն համոզմունքը, որ ՔՀԿ որոշ ներկայացուցիչներ սպասարկում են ոչ թե իրական հանրային շահը, այլ առաջ են մղում իրենց սեփական օրակարգերն ու շահերը: Մյուս

[13] 2015: *Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը*, էջ 14

https://hkdepo.am/up/docs/Policy_Dialogue_arm.pdf

կողմից, ՔՀԿ համայնքում ներկայացուցիչներից ոմանք ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում նշում են, որ որոշ կուսակցությունների հետ տեսնում են արժեքային անհամաձայնություններ, որոնց հետ խուսափում են երկխոսելուց ու համագործակցելուց: Մյուս կողմից, արժեքային ու գաղափարական մակարդակում որևէ կուսակցությանը համակրելն ուղղակիորեն չի նշանակում, որ ՔՀԿ-ն հետաքրքրված է տվյալ կուսակցության հետ երկխոսությամբ ու համագործակցությամբ: ՔՀԿ-ներն առաջին հերթին կարևորում են կուսակցությունների քաղաքական կապիտալն ու լայն ընտրազանգվածի առկայությունը, ինչպես նաև որոշումների կայացման մակարդակում վերջիններիս դերը:

Վերոնշյալ հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում որպես խոչընդոտ դիտարկվել է կուսակցությունների և ՔՀԿ-ների կողմից հետապնդվող շահերի տարբերությունը: Որոշ կուսակցություններ կարծում են, որ ՔՀԿ-ների օրակարգերի մաս կազմող որոշ նպատակներ չեն համապատասխանում ՀՀ-ի ներկայիս պետական շահերին:

Կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության մշակույթի բացակայությունը: Չնայած և՛ կուսակցությունները, և՛ ՔՀԿ-ները նշում են արդյունավետ և հաջողված երկխոսության փորձերի մասին՝ Հայաստանում վերոնշյալ երկխոսությունն ամբողջապես չի ձևավորվել: Առաջին հերթին առկա է այն կարծիքը, որ Հայաստանում ոչ բոլոր կուսակցություններն ունեն ՔՀԿ-ների հետ երկխոսելու կարողություններ, մյուս կողմից, ՔՀԿ-ներն իրենց հերթին մեծ մասամբ նախընտրում են երկխոսել պետական ինստիտուտների կամ իշխանական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Ըստ հարցազրույցների մասնակիցների՝ տվյալ հանգամանքը նաև պայմանավորված է կուսակցական և ՔՀԿ դաշտի թերի կայացվածությամբ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ կուսակցություններն ու ՔՀԿ-ներն ունեն տարբեր ակնկալիքներ և պատկերացումներ վերոնշյալ երկխոսության մասին: Կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության նախաձեռնողականությունն ու հետևողականությունը հիմնականում ապահովվում է ՔՀԿ համայնքի կողմից, կան սակավաթիվ բացառություններ: ՔՀԿ-ները նշում են, որ քաղաքականությունների մշակման գործընթացում նախընտրում են ուղղակիորեն աշխատել գործադիր կառավարության ներկայացուցիչների կամ Ազգային ժողովի հանձնաժողովների, քան կուսակցությունների հետ: Ներկայումս արտախորհրդարանական ուժերի հետ հիմնականում երկխոսում և համագործակցում են քաղհասարակության այն կազմակերպությունները, որոնց առաքելությունն ու ծրագրային նպատակներն ուղղակիորեն կապված են կուսակցությունների և կուսակցական համակարգի զարգացման հետ: Ինչպես միջկուսակցական երկխոսության դեպքում, այնպես էլ կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսության վրա ահռելի ազդեցություն է թողնում ներկայիս քաղաքական բևեռվածությունը և անհանդուրժող հռետորաբանությունը: Որոշ կուսակցություններ հարցազրույցների ընթացքում հնչեցրել են այն համոզմունքը, որ ՔՀԿ-ները ներկայումս նույնպես իրենց դիրքորոշումներն արտահայտելիս ու գործառույթներն իրականացնելիս հիմնվում են ներկայիս իշխանություն-ընդդիմություն քաղաքական առանցքի նախապատվության վրա:

Խորքային հարցազրույցները և իրականացված ֆոկուս-խմբային քննարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում քաղաքական դաշտի գաղափարախոսական և համակարգային չկայացվածությունը բարդացնում է ՔՀԿ-ների՝ վերջիններիս հետ երկխոսությունը: Չլինելով գաղափարապես կայացած՝ հստակ չէ, թե ինչ քաղաքականությունների մշակման գործընթաց են առաջ տանում կուսակցությունները, իսկ շատ դեպքերում հենց ՔՀԿ-ներն են ստանձում այդ դերակատարումը՝ ուղղորդելու և վերահսկելու քաղաքականությունների մշակումն ու իրագործումը: Տվյալ գործոնով պայմանավորված՝ ՔՀԿ-ները հաճախակի են բախվում մի շարք կարծրատիպերի: Առկա է նաև այն կարծիքը, որ քաղաքականությունների մշակման

կարողությունների և փորձի տիրապետումը մեծամիտ է դարձնում վերջիններիս՝ ստեղծելով հավելյալ խոչընդոտներ արդյունավետ ՔՀԿ-քաղաքական կուսակցություններ երկխոսության համար: Նույն խնդիրն առկա է կուսակցությունների շրջանում, երբ հատկապես իշխանական և քաղաքական լծակներ ունեցող կուսակցությունները գերագնահատում են սեփական ունակությունները և հակված չեն ընդունել քննադատություններ ու խորհուրդներ: Մյուս կողմից նշվում է այն հանգամանքը, որ ՔՀԿ-ները դիտարկվում են որպես քաղաքականությունների շուրջ ռադիկալ կարծիքներ ունեցող դերակատարներ, որոնց հետ դժվար է համաձայնության գալ:

Ինչ վերաբերում է **երկխոսության ձևաչափերին**, ինչպես կուսակցությունները, այնպես էլ ՔՀԿ-ները մեծամասամբ նախապատվություն են տալիս համատեղ աշխատանքային խմբերին, քննարկումներին և ինստիտուցիոնալ հարթակներին: Երկուսն էլ համարում են, որ երկխոսության ձևաչափը կախված է նպատակից: Հաջողված հարթակների բաղադրիչներն են հանդիպումների և շփումների շարունակականությունը, ինչպես նաև մասնակցայնության բարձր մակարդակը: Ինչ վերաբերում է մասնակցայնությանը, ՔՀԿ-ները ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում նշում են, որ այն հիմնականում ապահովում են հեղինակության և անձնական կապերի շնորհիվ: Այնուամենայնիվ, Հայաստանում հիմնականում վերոնշյալ երկխոսությունը տեղի է ունեցել իրավիճակային, ոչ շարունակական հանդիպումների տեսքով, սակայն մի շարք կուսակցություններ՝ ներառյալ իշխանական կուսակցությունը, խորքային հարցազրույցների ընթացքում նշում են, որ կա ցանկություն և պատրաստակամություն խորացնելու կուսակցություններ-ՔՀԿ երկխոսությունն ինստիտուցիոնալ և երկարաժամկետ հեռանկարում:

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա կուսակցությունների հետ ՔՀԿ-ների երկխոսության եղանակները կարելի է բաժանել երկու մակարդակի՝ անհատներ/կուսակցության անդամներ և կուսակցության ինստիտուցիոնալ մակարդակ: Անհատական կապերի դեպքում խոչընդոտ է այն հանգամանքը, որ կուսակցության անդամների մասնակցությունը երկխոսության միջոցառումներին ոչ միշտ է կրում ներկայացուցչական բնույթ, այսինքն՝ փոխանակված կարծիքներն ու ձեռք բերված պայմանավորվածությունները չեն կարող նույնականացվել կուսակցության դիրքորոշման և ինստիտուցիոնալ համագործակցության հետ: ՔՀԿ-ները նշում են, որ Թավշյա հեղափոխությունից հետո պետական հաստատություններն ու Ազգային ժողովի հանձնաժողովները՝ հատկապես հանձնաժողովի խմբակցությունների անդամները, ավելի բաց ու հասանելի են դարձել երկխոսության համար, սակայն միաժամանակ առկա է այն կարծիքը, որ երկխոսության միջոցառումներից շատերը կրում են ձևական բնույթ: Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ ՔՀԿ-ները չունեն մշակված ռազմավարություն կուսակցությունների հետ երկխոսելու համար, սակայն վերջիններս տիրապետում են ԱԺ հանձնաժողովների հետ համագործակցության մեխանիզմներին:

ՔՀԿ-ները նախընտրում են **երկխոսության թեմաների** այնպիսի շրջանակ, որոնց շուրջ ունեն կուտակված փորձագիտական գիտելիք և ունակություններ, սակայն ներկայումս ՔՀԿ համայնքում առկա է այն կարծիքը, որ պետության առջև ծառացած անվտանգային և արտաքին քաղաքական խնդիրները դարձել են առաջնային, և անհրաժեշտ է այդ թեմաների շրջանակում նույնպես երկխոսություն ծավալել: Վերոնշյալ թեմաների շրջանակներում ՔՀԿ-ները նախապատվություն են տալիս խորհրդարանական և քաղաքական դաշտում արդեն իսկ կայացած կուսակցությունների հետ երկխոսությանը: Իշխանական կուսակցությունը կարծում է, որ ՔՀԿ-ների հետ երկխոսելիս պետք է խուսափել այնպիսի ֆորմատներից, որ վերջիններս որպես GONGO չընկալվեն: Հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում նշվում է այն կարծիքը, որ քաղաքական կուսակցություններ և ՔՀԿ-ներ երկխոսության կողմերը ոչ միայն հավասարազոր չեն

որոշումների կայացման մակարդակում, այլև երկխոսության և պայմանավորվածությունների ձախողման դեպքում հավասարապես քաղաքական պատասխանատվություն և հեղինակության վնաս չեն կրում:

Ինչ վերաբերում է կուսակցություններին, վերջիններս առավել ուշադրություն են դարձնում կուսակցությունների շահագրգիռ թեմաներին նվիրված քննարկումներին և երկխոսությանը, ինչպես նաև միջազգային դերակատարների ուշադրության տիրույթում գտնվող ոլորտներին: Վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ պատահական չէ, որ բացի ՔՀԿ-ների ոլորտային առաջնահերթություններից, տվյալ շրջանում ինչպես ՔՀԿ-ների, այնպես էլ կուսակցությունների մեծամասնությունը նախընտրում է երկխոսություն ծավալել արտաքին քաղաքական և անվտանգային հարցերի շուրջ:

Կուսակցությունների ճնշող մեծամասնությունը չունի ներկայացուցիչներ պատասխանատու ՔՀԿ ոլորտի հետ համագործակցելու և փոխհարաբերություններ ձևավորելու համար: Համագործակցությունը հաճախակի հաստատվում է միջանձնական մակարդակում: ՔՀԿ-ները կուսակցությունների հետ համագործակցում են՝ ելնելով վերջիններիս ԱԺ հանձնաժողովներում ընդգրկվածության և ոլորտային փորձառության/առկա գիտելիքների տեսանկյունից: Իշխանական կուսակցության պարագայում կուսակցության անդամների՝ նախկինում ՔՀԿ ոլորտում աշխատանքային փորձ և կապեր ունենալը դիտարկվում է որպես առավելություն: Միևնույն ժամանակ ներկայումս խորհրդարանական իշխանությունը ՔՀԿ-ներին դիտարկում է որպես իրական քննադատ, քանզի համարում է, որ օրենսդրական և քաղաքականությունների մշակման ոլորտում գործունեություն ծավալելիս չի ստանում համապատասխան արձագանք ընդդիմադիր ուժերի կողմից: Հետազոտության առարկա կուսակցությունները կարևորում են ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ տեղական ՔՀԿ-ների կողմից ֆասիլիտացվող երկխոսության հարթակներն ու միջոցառումները, սակայն առաջինը համարում են ինչպես փորձագիտական և տեխնիկական մակարդակներում ավելի պատրաստված, այնպես էլ անաչառ: ՔՀԿ-ներն իրենց հերթին նշում են, որ ինչպես ՔՀԿ համայնքը, այնպես էլ կուսակցությունները չունեն մշակված ռազմավարություն և համապատասխան կարողություններ (հատկապես հաղորդակցության ոլորտում) միմյանց հետ երկխոսելու համար:

Երկխոսության արդյունավետության շուրջ վերոնշյալ հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում բացահայտված ընկալումները նույնպես միանման չեն: Մեծամասամբ երկխոսությունը դիտարկվում է արդյունավետ, երբ քաղաքականությունների մշակման մակարդում ձեռք են բերվում կոնկրետ պայմանավորվածություններ և կատարվում է համատեղ աշխատանք: Կարծիքների փոխանակումը, վստահելիության մթնոլորտի ձևավորումն ու փոխադարձ կապերի ամրապնդումը ևս դիտարկվում են որպես **երկխոսության արդյունքներ:** ՔՀԿ համայնքում առկա է այն փորձը, երբ երկխոսության արդյունքում մի շարք ոլորտային առաջարկություններ ներառվել են կուսակցական և կառավարության ծրագրերում, ինչը դրական է գնահատվել ՔՀԿ-ների կողմից:

Ներկայումս ինչպես ինստիտուցիոնալ՝ ԱԺ-ի շրջանակներում, այնպես էլ ոչ ինստիտուցիոնալ կուսակցություններ-ՔՀԿ-ներ երկխոսությունը հետազոտության առարկա կուսակցությունների և ֆոկուս-խմբային քննարկման մասնակից ՔՀԿ-ների կողմից գնահատվում է որպես պասիվ և նվազ արդյունավետ: ՔՀԿ-ների գնահատմամբ արտախորհրդարանական ուժերը միջընտրական շրջանում երկխոսելու որևէ հետաքրքրություն չեն ցուցաբերում: Ինչպես խորհրդարանական, այնպես էլ արտախորհրդարանական ուժերի հետ երկխոսելիս ՔՀԿ-ները հանդիսանում են համագործակցության շարժիչ ուժը: Սակայն վերջիններս կարծում են, որ հետպատերազմական

շրջանում իշխող և ընդդիմադիր կուսակցությունների համար ՔՀԿ-ների հետ համագործակցությունը դարձել է ոչ առաջնային:

Եզրակացություն

1) Քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսությունը միջազգային ասպարեզում ֆասիլիտացվել է մի շարք դերակատարների կողմից: Կարճաժամկետ նպատակներ հետապնդող երկխոսության ֆասիլիտացման ընթացքում առաջնային դեր են ստանձնել արտաքին քաղաքական դերակատարները, ինչպես օրինակ՝ Եվրոպական միությունը, Եվրախորհրդարանը և այլն: Երկարաժամկետ երկխոսության առաջամարտիկներն են միջազգային հիմնադրամներն ու կազմակերպությունները:

2) ժողովրդավարացման գործընթացներում գտնվող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, երկխոսության ֆասիլիտացումն ուղղորդվում է կուսակցությունների՝ կարողությունների զարգացմանը նպաստող ծրագրերով և նախաձեռնություններով: Միջազգային մի շարք երկխոսության հարթակներ առաջնային են համարում քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության ֆասիլիտացումը հետկոնֆլիկտային և քաղաքական սուր բևեռվածության պայմաններում:

3) ՀՀ-ում, չնայած որ տեղի են ունեցել միջկուսակցական և կուսակցություններ-քաղհասարակության երկխոսության հաջողված փորձեր, այնուամենայնիվ, տվյալ երկխոսության մշակույթը, ինչպես նաև կուսակցությունների ու ՔՀԿ-ների երկխոսության կարողությունները դեռ ամբողջապես զարգացած և կայացած չեն:

4) Լավագույն փորձ դրսևորած երկխոսության հարթակներն ու միջոցառումները առանձնանում են հետևյալ տարրերով՝ երկխոսության հստակ նպատակների իրազեկում, վստահության միջավայրի ձևավորում շարունակական հանդիպումների միջոցով, ներառականությունը և որևէ տեսակետի մեկուսացման բացառումը: ՀՀ-ում կուսակցությունները նախընտրում են երկխոսել առանց միջնորդների: Միջնորդված երկխոսության դեպքում նախապատվությունը տրվում է միջազգային կազմակերպություններին, այլ ոչ թե տեղական ՔՀԿ կազմակերպություններին: Որպես երկխոսություն ֆասիլիտացնող դերակատարներ՝ վերջիններս եզակի դեպքերում են համարվում անաչառ: Կուսակցություններն ու ՔՀԿ-ները նախընտրում են փակ **ձևաչափով** երկխոսության հարթակներ, սակայն անհրաժեշտ են համարում երկխոսության արդյունքների հանրայնացումը:

5) Ընդհանուր առմամբ միջկուսակցական և կուսակցություններ-քաղհասարակություն երկխոսությունն ունի երկու **թեմատիկ** ուղղվածություն՝ կուսակցական և քաղաքական համակարգի զարգացում և օրակարգային ու ոլորտային հարցեր: ՀՀ-ում միջկուսակցական երկխոսությունը տեղի է ունենում ճանաչողական, գաղափարական ու նպատակային համագործակցության հաստատման, կոնֆլիկտային իրավիճակների հարթեցման և բացառման նպատակով: Իրենց հերթին, ՔՀԿ-ները նախընտրում են երկխոսել կուսակցությունների հետ քաղաքականությունների մշակման գործընթացների շրջանակներում՝ փորձագիտական ու ՔՀԿ ոլորտային թեմաների շուրջ: Ներկայիս պահին երկու կողմն էլ անհրաժեշտ են համարում երկխոսել ՀՀ անվտանգային ու արտաքին քաղաքական հարցերի շուրջ:

6) Ներկայումս կուսակցությունների մեծամասնությունը ցանկանում է երկխոսել գաղափարակից և միևնույն քաղաքական նպատակներ հետապնդող կուսակցությունների հետ, սակայն պատրաստ է նաև երկխոսություն հաստատել այլ կուսակցությունների հետ, երբ խոսքը վերաբերում է համազգային, արտաքին քաղաքական և անվտանգային հարցերին:

Ընդհանուր առմամբ, որպես ամենաշատ քաղաքական լծակներ ունեցող ուժ, երկխոսության ցանկալի կողմ է իշխանական կուսակցությունը: ՔՀԿ-ներ-կուսակցություններ երկխոսության **նախաձեռնող կողմը** հիմնականում հանդիսանում է քաղհասարակությունը: Սակայն, ինչպես կուսակցությունները, այնպես էլ ՔՀԿ-ների մեծամասնությունը չի հետապնդում երկխոսության հաստատման երկարաժամկետ նպատակներ:

7) Քաղաքական կուսակցությունների միջև և հետ երկխոսության ամենամեծ **խոչընդոտը** երկխոսության մշակույթի և կարողությունների բացակայությունն է: Կուսակցությունների և ՔՀԿ-ների շրջանում առկա է միմյանց հանդեպ խորքային անվստահություն: Տվյալ անվստահությունն առկա է ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև միջանձնային մակարդակում: Ակնհայտ է, որ երկխոսության կողմերը տարբեր պատկերացումներ ունեն ՔՀԿ-ների գործունեության և գործառույթների, ինչպես նաև երկխոսության ակնկալվող արդյունքների շուրջ, ինչն էլ խոչընդոտում է երկխոսության կայացումը: Կուսակցությունները որպես այլ խոչընդոտ դիտարկում են երկխոսության՝ քաղաքական դաշտում որպես մանիպուլացիոն գործիքի օգտագործումը:

8) Քաղաքական պատասխանատվության ու ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը, ինչպես նաև երկխոսության ակնկալվող արդյունքների հստակեցումը դիտարկվում են որպես արդյունավետ երկխոսության **նախադրյալներ:** Սակայն, կուսակցություններն ու ՔՀԿ-ները համարում են, որ ներկայիս քաղաքական բևեռվածությունն ու անհանդուրժող հռետորաբանությունը չեզոքացնում են վերոնշյալ նախադրյալները և խոչընդոտում երկխոսության հաստատմանը:

9) Երկխոսության շուրջ պատկերացումներն ու ակնկալվող արդյունքները նույնական չեն ինչպես կուսակցական, այնպես էլ ՔՀԿ համայնքում: Որպես երկխոսության արդյունք՝ ՔՀԿ-ները մեծ մասամբ ակնկալում են ընդգրկված լինել օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքականությունների մշակման գործընթացներում, իսկ կուսակցությունները հաստատել քաղաքական և գաղափարախոսական համագործակցություն և համատեղ անդրադառնալ օրակարգային խնդիրներին: Կարծիքների փոխանակումը, վստահելիության մթնոլորտի ձևավորումն ու փոխադարձ կապերի ամրապնդումը ևս դիտարկվում են որպես **երկխոսության արդյունքներ:**

Հավելվածներ

Խորքային հարցազրույցների մասնակիցներ

1) Անդրանիկ Գրիգորյան, «Ժառանգություն» կուսակցության նախագահ
2) Անի Սամսոնյան, «Լուսավոր Հայաստան» կուսակցության կառավարման խորհրդի անդամ
3) Արծվիկ Մինասյան, ԱԺ պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ
4) Լևոն Զուրաբյան, «Հայ ազգային կոնգրես» կուսակցության *փոխնախագահ*
5) Հայկ Մամիջանյան, ԱԺ պատգամավոր, Հայաստանի Հանրապետական կուսակցության Գործադիր մարմնի անդամ
6) Շաքե Իսայան, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության փոխնախագահ
7) Սարգիս Խանդանյան, ԱԺ պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

Հարցաշար

1) Ինչպիսի՞ նախադրյալներ են անհրաժեշտ արդյունավետ միջկուսակցական համագործակցության և երկխոսության համար:
2) Ներկայումս ո՞ր թեմաների/հարցերի շրջանակի/օրակարգի շուրջ է հնարավոր հաստատել միջկուսակցական երկխոսություն:
3) Ինչպե՞ս կգնահատեք հայաստանյան կուսակցությունների երկխոսության կարողությունները:
4) Որո՞նք են ներկայիս պահին միջկուսակցական երկխոսության խոչընդոտները:
5) Ինչպիսի՞ շահեր/նպատակներ են հետապնդում կուսակցությունները միջկուսակցական երկխոսություն ծավալելիս: Որ կուսակցություններն են առավել արդյունավետ երկխոսում:
6) Խնդրում ենք նշել 2015 թվականից մինչ օրս տեղի ունեցած միջկուսակցական երկխոսության հաջողված և ձախողված փորձերը:
7) Որո՞նք են այդ երկխոսության/համագործակցության արդյունքները:
8) Ո՞ր թեմայի/օրակարգի շրջանակներում է տեղի ունեցել միջկուսակցական համագործակցությունն ու երկխոսությունը:
9) Ո՞վ/Ովքե՞ր են (անհատ, կուսակցություն, ՀԿ, միջազգային կազմակերպություն և այլն) նախաձեռնել միջկուսակցական երկխոսությունը:
10) Ինչպիսի՞ ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ձևաչափեր են կիրառվել միջկուսակցական համագործակցության և երկխոսության համար: Ո՞ր ձևաչափն եք համարում առավել արդյունավետ և ընդհակառակը՝ անարդյունավետ:
11) ՀՀ-ում ինչպիսի՞ միջկուսակցական երկխոսության հարթակների եք ծանոթ:
12) Որո՞նք են 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո միջկուսակցական երկխոսության/համագործակցության առանձնահատկությունները և/կամ փոփոխությունները:

13) Ինչպիսի՞ նախադրյալներ են անհրաժեշտ արդյունավետ ՔԿ-ՔՀԿ համագործակցության և երկխոսության համար: Արդյոք առկա են այդ նախադրյալները տվյալ պահին: Ո՞ր ոլորտներում եք տեսնում/հնարավոր համարում արդյունավետ համագործակցություն:

14) Ինչպե՞ս կգնահատեք ՔՀԿ-ների երկխոսության/համագործակցության կարողությունները:

15) Որո՞նք են ներկայիս պահին կուսակցություններ-ՔՀԿ երկխոսության խոչընդոտները:

16) Ինչպիսի՞ արդյունքներ և փոփոխություններ եք ակնկալում հետագա կուսակցություններ-ՔՀԿ երկխոսությունից:

17) Խնդրում ենք նշել 2015 թվականից մինչ օրս տեղի ունեցած Ձեր կուսակցության և ՔՀԿ համայնքի միջև երկխոսության հաջողված և ձախողված փորձերը:

18) Ո՞ր թեմայի/հարցերի շրջանակներում է տեղի ունեցել վերոնշյալ երկխոսությունը:

19) Որո՞նք են տվյալ երկխոսության/համագործակցության արդյունքները:

20) Ո՞վ/Ովքե՞ր են (անհատ, կուսակցություն, ՀԿ, միջազգային կազմակերպություն) և այլն նախաձեռնել կուսակցություն-ՔՀԿ երկխոսությունը:

21) Ինչպիսի՞ ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ձևաչափեր են կիրառվել կուսակցություն - ՔՀԿ երկխոսության համար: Ո՞ր ձևաչափն եք համարում առավել արդյունավետ և ընդհակառակը՝ անարդյունավետ:

22) Ինչպիսի՞ փոփոխություններ/տարբերություններ (եթե առկա են) կարող եք առանձնացնել 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո և առաջ տեղի ունեցած կուսակցություններ - ՔՀԿ երկխոսության շուրջ:

23) Խնդրում ենք նշել ՔՀԿ համայնքից ու՞մ (անհատ, ՀԿ, կազմակերպություն և այլն) հետ ունեցել եք հաջողված, ինչպես նաև ձախողված երկխոսություն:

24) Խնդրում ենք նշել ամենարդյունավետ և ոչ արդյունավետ երկխոսություն իրականացնող ՔՀԿ-ներին:

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ

1) Ալեքսեյ Պետրոսյան, *Թրանսպարենսի* Ինթերնեշնլ Հայաստան
2) Ավնիկ Մելիքյան, «Քաղաքական երկխոսություն» ՀԿ
3) Արտաշես Սերգոյան, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ
4) Գրիգոր Երիցյան, Հայ առաջադեմ երիտասարդություն
5) Դավիթ Ամիրյան, Բաց հասարակության հիմնադրամներ
6) Նինա Կարապետյանց, Հելսինկյան ասոցիացիա
7) Ջուլյա Սահակյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ
8) Վարդինե Գրիգորյան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձորի գրասենյակ
9) Տաթևիկ Ղարիբյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ
10) Քրիստինե Հովհաննիսյան, «Օքսիջեն» հիմնադրամ

Հարցաշար

1) Ինչպիսի՞ նախադրյալներ են անհրաժեշտ արդյունավետ ՔԿ-ՔՀԿ համագործակցության և երկխոսության համար: Արդյո՞ք առկա են այդ նախադրյալները տվյալ պահին: Որ ոլորտներում եք տեսնում/հնարավոր համարում արդյունավետ համագործակցություն:
2) Ինչպե՞ս կգնահատեք ՔՀԿ-ների երկխոսության/համագործակցության կարողությունները:
3) Որո՞նք են ներկայիս պահին կուսակցություններ-ՔՀԿ երկխոսության խոչընդոտները:
4) Ինչպիսի՞ արդյունքներ և փոփոխություններ եք ակնկալում հետագա կուսակցություններ-ՔՀԿ երկխոսությունից:
5) Խնդրում ենք նշել 2015 թվականից մինչ օրս տեղի ունեցած Ձեր կուսակցության և ՔՀԿ համայնքի միջև երկխոսության հաջողված և ձախողված փորձերը:
6) Ո՞ր թեմայի/հարցերի շրջանակներում է տեղի ունեցել վերոնշյալ երկխոսությունը:
7) Որո՞նք են տվյալ երկխոսության/համագործակցության արդյունքները:
8) Ո՞վ/ Ովքե՞ր են նախաձեռնել կուսակցություն-ՔՀԿ երկխոսությունը:
9) Ինչպիսի՞ ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ձևաչափեր են կիրառվել կուսակցություն - ՔՀԿ երկխոսության համար: Ո՞ր ձևաչափն եք համարում առավել արդյունավետ և ընդհակառակը՝ անարդյունավետ:
10) Ինչպիսի՞ փոփոխություններ/տարբերություններ կարող եք առանձնացնել 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո և առաջ տեղի ունեցած կուսակցություններ - ՔՀԿ երկխոսության շուրջ

Գրականություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ, 2022: *Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում*: Երևան: https://transparency.am/assets/documents/1643882326-87845-687.pdf

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան, 2015: *ՔՀԿ ոլորտի շուկայի համապարփակ հետազոտության արդյունքները*: https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/CSO-Market-Research_Full-Report_Armenian_final-1.pdf

Մարգարյան, Տ., 2018: *ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն*: Երևան: https://bit.ly/3IXR1uq

Blunck, M., Vimalarajah, L., Wils, O., von Burg, C., Lanz, D., Mubashir, M., Prinz, V., Denkovski, D., 2017. *National Dialogue Handbook: A guide for practitioners*. Berghof Foundation., Berlin. https://berghof-foundation.org/library/national-dialogue-handbook-a-guide-for-practitioners

Chatham House, 2021. *Impact Report 2020-21*. https://www.chathamhouse.org/sites/default/files/2021-07/2021-07-14-impact-report.pdf

Council of the European Union, 2014. *Foreign policy. Key terms in 24 languages*. https://termcoord.eu/wp-content/uploads/2016/07/Foreign-policy.pdf

Graham, K.M., 1998. *The Ideal of Objectivity in Political Dialogue*, in: The Paideia Archive: Twentieth World Congress of Philosophy. Philosophy Documentation Center, pp. 92–97. https://doi.org/10.5840/wcp20-paideia199841740

Hawes, L.C., 1999. *The Dialogics of Conversation: Power, Control, Vulnerability*. Communication Theory 9, 229–264. https://doi.org/10.1111/j.1468-2885.1999.tb00170.x

Integration of national minorities in Georgia: Policy papers, 2017. Tbilisi. https://eecmd.org/wp-content/uploads/2017/07/Policy_Papers_ENG.pdf

Jong, K., Breukelen, A., 2012. *The NIMD approach facilitating interparty dialogue*. The Hague. http://www.bibalex.org/search4dev/files/430574/458213.pdf

Kolster, C., Ricci Bitti, I., Rosselli, C., Wittrich, H. (Eds.), 2021. *The Open European Dialogue Declaration: Creating Better Political Conversations*. Open European Dialogue. https://www.openeuropeandialogue.org/download-file/1823/

Open European Dialogue, 2021. *Participatory process in Politics: A guide to improve political conversations*. https://www.openeuropeandialogue.org/download-file/1795/

Pielievin, I.Yu., 2019. *Political dialogue – a key tool for providing democratic transit*, in: Democratic Transit in Terms of Security and Development: Ukrainian and Foreign Experience. Liha-Pres, Lviv-Torún, pp. 119–134. https://doi.org/10.36059/978-966-397-158-2/119-134

Prieto, S.R., Bloching, S., 2015. *Inspiring democracy: Operating model for inclusive and participatory policy dialogue*. The Hague. https://nimd.org/wp-content/uploads/2016/11/INSPIRED-Handbook_final.pdf

Ten Hoove, L., Scolthbach, P.A., 2008. *Democracy and Political Party Assistance in Post-Conflict Societies*. The Hague. https://nimd.org/wp-content/uploads/2015/02/Democracy-and-Political-Party-Assistance-in-Post-Conflict-Societies.pdf

The European Commission, 2019. *Guide for civil society on sustaining peace through elections*. https://media4democracy.eu/wp-content/uploads/documents/Toolkit_EN/Guide-sustaining-peace.pdf

Working with political parties in fragile and conflict-affected settings, 2015. The Hague. https://nimd.org/wp-content/uploads/2015/05/2015-04-Fragile-and-Conflict-Affected-Settings.pdf

Աբստրակտ

Քաղաքական կուսակցությունների հետ և միջև արդյունավետ երկխոսությունը ժողովրդավարական համակարգերի կարևոր բաղադրիչն է: Չնայած ՀՀ-ում արձանագրվել են ինչպես միջկուսակցական, այնպես էլ կուսակցություններ-քաղհասարակություն հաջողված և չհաջողված երկխոսության փորձեր, այնուամենայնիվ, կուսակցությունների հետ և միջև երկխոսությունը կայացած չէ: Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվում է քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության ֆասիլիտացման լավագույն միջազգային փորձը, ինչպես նաև ՀՀ-ում միջկուսակցական և կուսակցություններ-քաղհասարակություն երկխոսության առանձնահատկությունները: Մասնավորապես, հետազոտությունը որակական վերլուծության մեթոդոլոգիայի կիրառմամբ վեր է հանում վերոնշյալ երկխոսության ֆորմատային և թեմատիկ առանձնահատկությունները, ինչպես նաև խոչընդոտները, նախադրյալներն ու արդյունքները: Հետազոտությունն ի ցույց է դնում, որ քաղաքական կուսակցությունների միջև և հետ երկխոսության ամենամեծ խոչընդոտը երկխոսության մշակույթի և կարողությունների բացակայությունն է: Կուսակցությունների և ՔՀԿ-ների շրջանում առկա է միմյանց հանդեպ խորքային անվստահություն: Միևնույն ժամանակ, ինչպես կուսակցությունները, այնպես էլ քաղհասարակության ներկայացուցիչները հետաքրքրված են վերոնշյալ երկխոսության խթանմամբ:

Բանալի բառեր. քաղաքական կուսակցություններ, քաղաքական երկխոսություն, քաղհասարակություն, երկխոսության ձևաչափ, միջկուսակցական երկխոսություն, քաղաքական մշակույթ

Abstract

Effective dialogue with and between political parties is an important component of democratic systems. Although both successful and unsuccessful attempts of inter-party and political parties-civil society dialogue have been recorded in the Republic of Armenia (RA), the culture of dialogue with and between the political parties has not been fully formed. The present study examines the best international practice of facilitating dialogue with and between political parties, as well as the features of inter-party and political parties-civil society dialogue in RA. In particular, the research, using qualitative analysis methodology, highlights the format and thematic features of the above-mentioned dialogue, as well as its obstacles, antecedents and outcomes. The research reveals that the biggest obstacle to dialogue between and with political parties is the lack of dialogue culture and dialogue capacities. Among the parties and CSOs there is a deep mistrust of each other. At the same time political parties as well as representatives of civil society are interested in promoting the above-mentioned dialogue.

Keywords: political parties, political dialogue, political society, dialogue format, inter-party dialogue, political culture